



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«28» 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 039 - 24

Ձեռնարկողը՝

«ՄԻԼՈՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Կոտայքի մարզ, Արուսյան համայնք, գ.Առինջ Բ թաղամաս 1-ին փողոց 1/1

Գործունեությունը՝

**Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի
համալիրի կառուցման շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
Արուսյան համայնք, Արուսյան բնակավայր Բարեկամության Հրապարակ 5/1

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԷԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 039 - 24

«28» 03 2024թ.

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

Գործունեությունը՝
Տեղադրման վայրը՝

«ՄԻԼՈՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
«Բ» կատեգորիա
Աբովյան համայնքի Աբովյան բնակավայր

Ներածական մաս. «ՄԻԼՈՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝
Ընկերություն/ նախատեսում է Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի
Բարեկամության Հրապարակ 5/1 հասցեում կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

Համաձայն ՀՕ 150-Ն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և
փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի
նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության
տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և
փորձաքննության: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների
համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ
իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N04082023-07-0146, /ծածկագիրը՝
07-002-0041-0025/, նախագծման թույլտվությունը (ՃՏԱ) N493, տրված՝ 22.08.2023թ.:
Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական
նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի
տեսակը՝ սեփականություն: Հողամասն ունի հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք
լայնական ուղղվածություն, կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում
է 0.63 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող «Բնակելի համալիրի» նախագիծը
բաղկացած է 2 նկուղային և 16 վերգետնյա հարկերից: Նկուղային հարկերը /-6.600 և -
3.300 նիշերում/ նախատեսված են ավտոկայանատեղիների համար /234 մեքենա/: Շենքը
ունենալու է թվով 398 բնակարան: Բնակելի համալիրն իրենից ներկայացնում է
ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող կառույց՝ ներդաշնակ շրջակա
կառույցներին տվյալ միջավայրում: Նախատեսվող բազմաբնակարան բնակելի
համալիրի կառուցման հողամասի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- Հողամասի մակերես՝ 6300 մ²:
- Շենքի կառուցապատման մակերես՝ 2822 մ²
- Կանաչապատման մակերես՝ 2520 մ²
- Անջրանցիկ՝ (Մայթ, ճանապարհ, ճեմուղի և այլն)՝ 958 մ²
- Ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 5116 մ²:
- Բնակարանների քանակ՝ 398 հատ:



➤ Ավտոկայանատեղի 234 հատ:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը, էլեկտրամատակարարումը և գազամատակարարումը կիրականացվի համապատասխան մարմինների կողմից տրվող տեխնիկական պայմանների: Շենքի ջերմամատակարարումը իրականացվում է յուրաքանչյուր բնակարանում տեղակայված տուրբո համակարգի 24կվտ ջերմարտադրողականության գազի կաթսաներից: Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ ավտոկայանատեղերից: Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակալենտրոնական վահանակից: Հարկում հակաձխային արտածման համար միջանցքի պատին տեղադրվում են ծխահեռացման փականներ EI45 հրակայունությամբ: Շենքերի էներգաարդյունավետության մակարդակը գնահատելու համար՝ նախատեսված է օդատաքացուցիչների և օդասառեցուցիչների հզորության ավտոմատ կարգավորում, արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելիության փոքր տոկոս ունեցող պատուհաններ: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը: Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և ինքնափակվող: Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ և միջոցառումներ՝ դեպի բնակելի և հասարարական տարածքներ: Բնակելի համալիրում տարածքում աղբահանության նպատակով կտեղադրվեն աղբահավաք տարողություններ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Ներկայումս հայցվող հողամասն ազատ է կառուցապատումից, ռելեֆը հարթ է, երկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ պատմամշակութային հուշարձանների տարածքներ առկա չեն, ծառեր բացակայում են, տեղ տեղ հանդիպում են բազմամյա բուսատեսակներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են ըստ Աբովյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված բարեկարգման և կանաչապատման նախագծի, որը իր մեջ ներառում է սիզամարգ, թփեր և տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներ՝ մասնավորապես թղկի, գնդաձև թույաներ, սակուռա, բարբարիս, ասպիրակ, Ֆորզիցիա, խենոմելիս և այլն:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով՝ բացառելով բետոնաջրերի արտահոսքը և բետոնաջրերով աղտոտումը շրջակա միջավայր: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը: Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինհրապարակ, և տեղադրվում:



- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Այն տեխնիկական միջոցները, որոնք հնարավոր չէ մոտեցնել սպասարկման կետեր, կսպասարկվեն շինարարական հրապարակում՝ մասնագիտացված կազմակերպութեւ-յունների կողմից: Տարածքում քայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու: Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է Աբովյանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Շինարարության փուլում ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքների ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ԲԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն էլեմտրամատակարարման պայմանագրի:

Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 42000 մ³ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 29400 մ³ ծավալով զանգվածը կտեղափոխվի համապատասխան մարմնի կեղմից հատկացված վայր, մնացած մասը՝ 12600.0 մ³-ը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք (պահվող կույտի մակերեսը կտոփանվի՝ փոշեառաջացումը կանխելու նպատակով): Հողաբուսաշերտի հզորությունը 20 սմ է, շինարարության ընթացքում հանված հողաբուսաշերտը օրենքով սահմանված կարգով կպահպանվի շինհրապարակում, այնուհետև կօգտագործվի կանաչապատման աշխատանքներում:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 0.7 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 800 մ³ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060001004/, ամբողջությամբ տեղափոխվելու է Աբովյանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող /ծածակագիրը՝ 31401100 08 99 5/, 29400 մ³ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են



բնապահպանական կառավարման պլանում: Հայտում ներկայացվել են հիմնական բնապահպանական միջոցառումները՝ ըստ ազդեցության ուղղությունների: Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են հիմքերի փորման ընթացքում և շինարարության փուլում փոշու արտանետումներով, վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx): Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն Կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար,
- կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ առաջնորդվելով Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

Պարճառաքանական մաս

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Աբովյան համայնքի Աբովյան բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:



Պարտադիր կադարման ենթակա պահանջներ

1. Բազմաբնակարան բնակելի համալիր կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
 - շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
 - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
 - շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
 - բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արվյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Արվյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված բարեկարգման և կանաչապատման նախագծի համաձայն:
5. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
6. Անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է



դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ



Սուսաննա Անպոնյան